Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Լեռ
37

# ՃՈՐՔՆԵՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՏԵՏՐԱԿ Ա.

ՄՈՍԿՎԱ
1855.

1999
Լեռ
37

# ՆՈՐ ՔՆԱՐ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՏԵՏՐԱԿ Ա.

# ԺԱՆԱԺԱՆ ԵՐԳՔ

## ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԱԴԱՄԱՅ ԵՐԵՒԱՆԵՑՒՈՅ

# ԱԶԲԱՐ

## ՄԱԿԱՆՈՒԱՆԵԼՈՅ

'Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԱՑ

## ՈՍԿԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ ԵՐԵՒԱՆԵՑԻ

*Խրատ առէք՝ կարդացէք Աստուծոյ գիրը,*
*Լաւ ճանաչէք ձեր ճանապարհն ու փիրը:*

Երես 6, տող 10.

ՄՈՍԿՎԱ

'Ի տպարանի Արեւելեան լեզուաց ճեմարանի Տեարց Լազարեանց:

1855.

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ:

на основанiи отзыва Адъюнкта Санктпетербургскаго Университета Бероева съ тѣмъ, чтобы по отпечатанiи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Санктпетербургъ. Сентября 26 дня, 1855 г.

*Цензоръ Н. Елагинъ*

29.39

4 37-60

# ԱԶԻԱՐ ԵԳԱՄԻ

## ԵՐԳԵՐՆ

---

### Ա.

Երգ ՚ի վերայ աւերման և խորտակման Ակոռու գեղջ ՚ի 20 յունիսի 1840 ամի:

Ո՞վ էր տեսել էս [1] աշխարհս էս օրին,
Մեր մեղացն շարժը քանդեց Ակոռին:

Զարհուրելի՛ էր շարժի եկած օրը,
Սար ու ձոր իրար դիպաւ՝ ասեմ ո՞րը,
Մերը որդուն՝ որդին մոռացաւ հօրը,
Սարսափանք էր նայելիս Մասըսայ [2] ձորին:

Էս պատիժն ամէնն էր մեր մեղիցը,
Արարատեան սարը շարժեց տեղիցը,
Տակովն արեց՝ մարդ չի պրծաւ գեղիցը,
Ո՛չ Հայ, ո՛չ Թուրք, ո՛չ Ջըհուտ [3], ո՛չ Ասորին [4]:

Լերին քանդեալ, Թընդաց որոտաց ձորը,
Ախմիշ [5] էլաւ՝ եկաւ ձիւնաբեր ջուրը,
Խոսեաց՝ տարաւ վանքն աւազան աղբիւրը,
Գիլի [6] հաւաքեց՝ ածեց յանդունդս խորին:

Բարկացել էր մեր Արարիչն էս հետին,
Իրար դիպաւ՝ շարժեց Երկինքն ու գետին,
Չի՛ խնայեց Սուրբ Յակոբ Հայրապետին,
Որ քեռի էր Լուսաւորիչ Գրիգորին։

Ակոռին էր աշխարհիս մի նշանը,
Չի պահելով Աստուծոյ պատուիրանը,
Անմեղ տեղը կորաւ չորս հազար ջանը [7],
Թէ լսէին Աստուածային Սուրբ բանը,
Թէգ կու լսէր դարձ եկած մեղաւորին։

Իրատ առէք՝ կարդացէք Աստուծոյ Գիրը,
Լաւ ճանաչէք ձեր ճանապարհն ու փիրը [8],
Փառք տուեցէք՝ մէկէլ չ'գայ էս Թիրը [9],
Պաղատեցէք Աստուածածնու Աթոռին։

Նոյ վայր իջաւ տապանովն այս Սարումը,
Յակոբ Հայրապետն աղօթեց քարումը,
Հազար ութ հարիւր քառասուն տարումը,
Էս պատիժն եկաւ Յունիսի քսան օրին։

Մարդ չիմացաւ խեղճ Ակոռու հնարը [10],
Գարբէդիար [11] ընկաւ ամէն մի քարը,
Իրատ առէք՝ դուք էլ [12] մէք գործիլ չարը,
Էս նասիհաթն [13] արաւ Ադամ Աղբարը [14]։
Միշտ փառք տուէք ձեր անմահ Թագաւորին։

---

## Բ.

Ո՛վ սիրելիք՝ կենալ մէք դուք՝ էս փուչ աշխարհի մէջը,
Երթանք՝ ճգնութիւն անենք՝ եարա՛նի [1] լեռ քարի մէջը,
Հայր Աբրահամու նման միշտ ման գանք օչխարի մէջը,
Հոգւոյ վախնող մարդ՝ ոչ [2] կենալ էլլարի [3] մէջը։

Ո՛վ սիրելիք աշխարհիս ամենայն բանը փուչ,
Թօլ[4] այ ըլնում չարխի[5] պէս՝ գնում գովրանը[6] փուչ,
Մեռնողի համար կ՚լինի ոսկեղէն մադանը[7] փուչ,
Կ՚փաթաթեն կտաւում՝ կ՚քցեն մաղարի[8] մէջը։

Արդար մաքուր մնալն՝ խիստ գովական բան կ՚լինի,
Մարմնոյն օգտաւէտ ոք՝ հոգւոյն խիստ ղեան կ՚լինի,
Վերջի ատեանը գալուս՝ ուղիղ դատաստան կ՚լինի,
Կ՚հրամայի, Տէրը, քցեկէք վառ կրակի մէջը։

Աղբար Ադամն եմ խեղճացել՝ կեանք չունիմ հէչ[9]
մէկ սահաթ[10],
Թալահըս[11] չար այ ընկել՝ դօվլաթն[12] այ գլխիս ղահաթ[13],
Էլ ո՞նց[14] ապրեմ աշխարհիս՝ դուք խրատէք՝ ջամահաթ[15],
Ի մանկութենէ մինչև ցայսմ՝ եմ ահուղարի[16] մէջը։

---

# Գ.

Ես չեմ ուզում էս թավուր[1] փիս[2] մահուտը,
Ինձ խաբելայ պարոն Խեչօ[3] եահուդը[4],
Մութը տեղը կտրեց՝ չիմացայ փուտը,
Պէտք է որ անիծեմ Նորա մօր սուդը[5],
Աստըծանով երդում կերաւ՝ ասէց սուտը։

Որ լաւը տաս՝ քեզ համար բաւ կուլի,
Բոլոր աշխարհի միջումը չաւ[6] կուլի,
Էս սօլի[7] երեսքաշին լաւ կուլի,
Ստօլ չունիմ՝ կտըրվելայ չորս ոտը։

Մի աւէք պարոն Բարին՝ էս ինչ ղա՛լ[8] այ,
Որ տուելայ Աղբարին՝ էս ինչ մա՛լ[9] այ,
Կասէնաս թէ ներկած բարդանի[10] շալ[11] այ,
Դաշ[12] էլ կըլի, որ մէջը ճըխտես խոտը։

Խարար առի՛ ըստուր [13] գինը նէչա՞ [14] այ,
Ես մահուդ չի՛ բալքա [15] մահուտ բէչա [16] այ,
Տեսնողները հէնց իմացան քէչա [17] այ,
Խարար [18] ընի ըստրայ էլ ղաւօղը [19]:

Ես մահուդի Թարիֆը [20] ևս շատ արի,
Տուի գերձակին՝ լայաղ [21] չարաւ՝ որ կարի,
Ասէց՝ էս ի՞նչ այ, չի արժի մի փարի [22],
Լեզւով նամ [23] տուէց՝ նամ չի առաւ մի տուտը:

Մունհաթ [24] եմ անում՝ առաջ էն լաւը տաս,
Փուֆուալէն՝ [25] շաւաղ [26] տալէն խաւը տաս,
Աստառն ու քօբէն [27], շըլնքի մաւը [28] տաս,
Խիաթին [29] ու դուկմէն [30] ու մերամուտը [31]:

Աղբար Աղամն եմ Թահրղ [32] կանեմ,
Աղա երեսըս քեզ փիանդաղ [33] կանեմ,
Թէ որ չի տաս՝ Պօլկօմնիկին [34] արզ [35] կանեմ,
Ընտրանից [36] կառնեմ ամէն եկամուտը:

---

## Գ.

Արի հոգի, ջան [1], ինձի եադ [2] մի՛ անիլ,
Լաւութիւնիս փոխանակ վատ մի՛ անիլ,
Վարդը քաղած բիւլբիւլ եմ դադ [3] մի՛ անիլ,
Ինձի աչքից քցածի հատ մի՛ անիլ,
Չարակամների սիրտը շադ [4] մի՛ անիլ:

Հագուստըդ, նարար [5], ինսանի [6] կարած այ,
Գուլգաղ [7] եախէդ [8] գուլաբաթնով [9] արածայ,
Ակուխքներըդ մարդարիտով շարածայ,
Սարսարի [10] եմ՝ խելքըս գլխէս տարածայ,
Աշխիդ [11] հիւանդն եմ՝ դեղ ու ղադ [12] մի՛ անիլ:

Կռներըդ չիմշադ [13] է՝ բոյըդ [14] սուրահի [15],
Փէշքա [16] հոգիս, եա՛ր [17], քու գրկումդ տայի,
Մէկ պռօշտով [18] խաբաբայ [19] սիրտս շահի,
Դուլթաղի [20] պէս միշտ ինձ դրանըդ պահի,
Էս ցաւիցըն ինձի ազատ մի անիլ:

Թուխ մազերիդ փունջը չի գալ համարի,
Աչքերըդ նման է շամս [21] ու ղամարի [22],
Ունքերըդ նման երկնային կամարի,
Գեղեցկութեան նշաններըդ ջամ [23] արի,
Տաներկուան թա՛յ [24] արա բադ [25] մի՛ անիլ:

Նոր մաղան ես անգին քարի բարեբար [26],
Աստուած սիրես՝ հալիցըս [27] իլ [28] մի խաբար,
Մերջիս նաֆասն [29] է՝ անիրաւ՝ ինձ մի ճար,
Աչքար Ադամըն աղաչում մուղարար [30],
Խաբար սիրտըս մէկէլ բարբադ [31] մի՛ անիլ:

## Ե.

Ո՛վ իմ դուշա [1] ջան՝ սրտիս սիրական, սիրոյդ էլէլ եմ սիրով սիրաբան, սուր սուր սուսերաւըդ ինձի ըսպան, սերկեան ժամանակիս ըլնի նշան, դառել եմ ինչպէս մէկ դի անկենդան, է՞ն անողորմ ինսան, տէր ես վատ բնութեան, թէ չանես էդէնց բան, չեմ խնայել ես ջան, կեանքս բոլորը քեզ կտամ ղուրբան [2]:

Կեանքս բոլորը զաւթ [3] ես արել դուն, խելքս տարել ես՝ արել ես մաջլուն [4], գեղեցկանկար պատկերդ սիրուն, խալըդ [5] նախընթաց՝ ծագման արեւուն, — ծագման արեւուն դուն ես կարապետ, չեմ համարձակում ասիլը թէպէտ, եարաբ կըլի մի դովրան քշենք երկուսս իրար հետ, սրտիդ մի՛ պահիլ խէթ, — սրտիդ խեթերը չաղ [6] են ըլել ինձ վերայ ամէն, հոգւով

մարմնով սպանել կամեն, ինձ պըրծացրու էս ղուսա՝ ղամէն [8], ղամխարըս [9] դու ես՝ ազիզ [10] գովական, համ ողջախոհական։

Ըստ ողջախոհին նման Յովսէփայ, տեսնողը հազար զամ [11] կանէ փա՛հ փա՛հ [12], մի էսպէս ինսան չեմ տեսել՝ Թօքա [13], էդ տեսութիւնդ թէ աշխարհըս գայ, — աշխարհ Թօփ [14] ընի չի ընիլ հատը, շատ գովելի է խելք ու խրատը, ես կ՚սիրեմ՝ քանց սիրումայ եաղը, էլ չեմ ասիլ վատը, — լայաղ չի վատը քու պայծառ անուան, դէմքդ նման ունէ արեգական, լուսով գլուխին քան, քեզ ծառայ եմ մինչ ՚ի օրըս մահուան, յաւիտեանըս՝ յաւիտենից յաւիտեան։

Յաւիտեան ըսկի չեմ մոռանալ քեզ, վարքըդ բարի հանդարտ ու խոնարհ ես, թէ հոգիառ ես՝ դասթըքէչա [15] իլ թէզ [16], էսքան նեղութիւնները մի տալ մեզ, շատ ուրախ կ՚լինիմ թէ ջանս առնես, — ջանըս քեզ մատաղ այ, կեանքըս բոլորը կանեմ սադաղայ [17], — կեանքըս սադաղա քեզ՝ իմ սիրական, աշխարհիս գովական, վարքըդ բարըյական, — խիստ բարի է վարքըդ, սալթանաթ [18] ու սարքդ [19], ապուշ էլայ՝ որ տեսայ հնարքդ, դրութիւն ու կարգդ, խիստ համեղ այ բարքդ, — համեղ այ բարքդ՝ ով իմ սիրական, ներդաշնակ՚ել ես պիւլպիւլի նման, աշխարհ կուհիանան, նքթեալ կ՚թուլանան, Ագրար Ադամի ջանը քէ հէյրան [20], էյ մարալ [21] ու ջէյրան [22]։

## Զ.

Ասումես դիմացիր՝ ո՛նց դիմանամ — մի թէ ես եմ քար՝
դարդիս [1] արա՛ մէկ ճար,
Կեանքըս մաշել ես բոլորովին՝ ամէնը խոսու՝
էս ցաւըն է դժուար,
Էսքան նեղութիւնը ինձի մի՛ տար անողորմաբար՝
ով դու իմ սիրահար։

Ընդին պարգևիցըդ պարգևի՛ ըստ քույց գքույս՝
բողբոջ ես նորաբոյս,
Եկ՛ սէր իմ ազնիւ, աղաչումեմ, խղճա՛ խղճալյս՝
տո՛ւր բաւականին յոյս,
Ինչ ինքըդ ես անտանելի ցաւին գտի հնար՝
ինձ մի՛ թողուլ անճար։

---

Շատ վախտ [2] է քաշումեմ կարօտդ՝ չես գալի երես՝
մինչ Նրբ դիմանամ ես,
Իմ դժբախտութիւնըս բաւ է ինձ՝ մի՛ անիլ էդպէս՝
կեանքըս արեցիր կէս,
Ողորմութիւն արա՛ աղքատիս՝ քաշի մօտըդ տար՝
տանջիլ մի՛ չարաչար։

Վախտ որոտումես, վախտ ամպումես, վախտ մթնումես շատ՝
անձրևումես կաթ կաթ,
Վախտ հարաւային հողմոյ նման հնչումես խիստ սաստ՝
ես ըլնումեմ զգաստ,
Վախտ բարկանումես, վախտ նեղանում, կամենում ինձ չար՝
սարսափումէ աշխարհ։

Խնթիարըս [3] կտրել ես, հալել է իմ սրտիս եղը՝
էդ քու փայլուն գեղը,
Խոցւած սրտիս նշան է դրել՝ ունքիդ անեղը՝
դու իմ ճար ու դեղը,
Սափսափ[4] կապած թարթափներիդ պէս՝ չի՛ լիլ քէմանդար՝[5]
սուր սուր քան գնշտար։

Չարակամների խօսքերը քեզ խրատ ես արել՝
խիստ շատ վատ ես արել,
Ուրիշների հետ ման գալը՝ քեզ ադաթ [6] ես արել՝
ինձի եադ ես արել,
Ես իմ բախտիցն եմ գանգատաւոր միշտ և մուղարար՝ [7]
ինձ չէ տալիս դադար։

Ցաւըրդ ինձ ես տալիս, ուրիշներին քաղցր խօսքերդ՝
ինձ էս այ քու խէրըդ,
Ինձնից աւելի, ասա՛ տեսնեմ, էլ ո՞վ այ տէրդ՝
ինձ նա տայ քու սէրդ,
Դու քու դարդերդ լաւը գիտես՝ խեղճ Ադամ Աղբար՝
խալխըն [8] ինչ այ խաբար։

---

## Ե.

Քցել ես սրտիս մէջըն վառվառ կրակը սիրական,
Համ դինըս [1], համ իմանըս [2] հոգւոյս ճրագը սիրական։

Ականջ արա՛, սիրական, տես քեղ ինչ խրատ եմ ասում,
Հոգւոյդ դրանը սատկի ինձ նմանը շատն եմ ասում,
Նշտար ղամզէքոնցըդ [3] ասա՛ սպանի ոչ սաղ եմ ասում,
Չկայ բոլոր աշխարհիս միջումը քեղ հատ եմ ասում,
Հրեշտակաց նման այ քու օրինակըդ սիրական։

Սէրըդ ինձ դերի այ արել՝ պահելայ դուլթսաղի նման,
Ո՛չ պահումայ, ո՛չ թողում, ո՛չ մորթում մատաղի նման,
Ո՛չ գիժ [4] եմ, ո՛չ խելօք եմ, ո՛չ էլ թէ սարսաղի նման,
Ո՛չ մեռած եմ, ո՛չ թաղած, ո՛չ կենդանի սաղի [5] նման,
Ո՛չ գրումես, ո՛չ ջնջում օմրիս [6] նամակը՝ սիրական։

Ընձի [7] զուլում [8] չի անի ասացէք էդ սիրականին,
Իս ինչպէս անտանելի ցաւ է՝ քցել այ իմ ջանին,
Մեղք արի, ռա՛հմ [9] արա՛, անիրաւ, ինձպէս ջիվանին [10],
Սեաւերես դաս իմ մօտըս՝ Աստուծոյ յաւուր դատաստանին,
Չմոռանաս դու իմ աշխատանք ու ամակըս [11] սիրական։

Եշխի [12] ջափին [13] դիմանող՝ ո՛չ ոք չի ըլնիլ իմ թայըս,
Եսքան սիթամի [14] տեղակ մի հատ պռօշտի [15] է փայըս [16],
Ինէլ ինձ բաւական է՝ թէ չափաղաթ [17] անի շա՛հըս [18],
Չեմ դառնիլ ես սովորիցըս [19] թէ կուզենայ շանց [20] տայ մահըս,
Մխանդամ մեռնիլըս առել եմ աչքիս տակը՝ սիրական։

Քաղցր ձայնըդ հանելիս՝ սրտիս խրախոյս ես տալի,
Բացվել ես արեգակի պէս աշխարհին լոյս ես տալի,
Մի շողըդ մեզ կաթելիս ընդուր[21] էլ ափսոս ես գալի,
Ընձար Ազբար Ազամին էս ի՞նչ թավուր յոյս ես տալի,
Չես քաշում, թէ սպաննես, էշխիդ դանակը՝ սիրական։

## Ը.

Էս մի սիրական կուզեմ դարդից խաբարդար[1] ըլնի,
Համ խելօք՝ համ դանանդայ[2] ո՛չ թէ խելագար ըլնի,
Կեանքիս հետ կեանք ունենայ՝ ահլի[3] բաֆադար[4] ըլնի,
Մեր երկըսիս պայմանը՝ էս թավուր իկրար[5] ըլնի։

Ամէն փուչ սիրականի համար՝ մի ջիվան պըտի[6],
Հաւատարիմ սիրելըդ փիանդաղ ու ջան պըտի,
Ճանփումը ղուրբան անես օմրըդ բիրդան[7] պըտի,
Քաղցր խօսալ ունենայ՝ անուշ սիրական պըտի,
Սրտով սիրի սիրելըդս՝ սիրով սիրահար ըլնի։

Մի խօսքը սահհ[8] եա՛ր կուզեմ՝ որ աշխարհս հաւանին,
Իմանաս էլ ինչ պէտք այ բաֆալու[9] սիրականին,
Գէմքդ փիանդաղ անես՝ ջանըդ ղուրբան ջանին,
Որ հոգի տաս՝ չի կորած՝ էս թավուր գովականին,
Թէ դրուստ[10] միտք ունենայ՝ քեզ հետ մուղարար ըլնի։

Բաֆալու սիրականին պէտք է քէմա՛լ[11] ունենայ,
Ուրիշներին չի լսի էս թավուր հալ ունենայ,
Իրան սիրականի հետ քաղցր խօսալ ունենայ,
Գիշեր ցերեկ միատեղ սէյր[12] ու ման գալ ունենայ,
Չարակամ թշնամիքոնց սրտին ահուզար ըլնի։

Փուչ սիրականի համար պէտք է ա՛խ ու վա՜յ չանես,
Ընկած տեղը ամէն վախտ ուղիղ սրտով սայ[13] չանես,
Հաւատարիմ սիրելըդ ղոնաղի[14] հետ թայ չանես,
Ընձար Ազբար Ազամի աշխատանքն զայ[15] չանես,
Չեմ հաւատալ աշխարհս թէ քեզ բարերար ըլնի։

## Թ.

Նոր սիրուն պատանի կայտառ՝ արևուդ մատաղ,
Հրեշտակի պէս հոգիառ՝ արևուդ մատաղ,
Դու ինձի հետ սիրելի գառ՝ արևուդ մատաղ,
Բէհար [1] ու գարունքվայ ես գառ՝ արևուդ մատաղ,
Բիւլբիւլի պէս հանգ ունես բառ՝ արևուդ մատաղ:

Իրան [2] ու Թուրան [3] չկայ իմ սիրականիս պէսը,
Գիփի աշխարհին կու արժէ ամէն սորա մի տեսը,
Էսպէս աշխարհ չի եկել մինչի Ադամայ դէսը [4],
Տասն ու հինգ օրվան լուսնի պէս փայլում երեսը,
Գէմքդ է ղամբար ջահավառ՝ արևուդ մատաղ:

Խելքս գլխէս տանումէն քեղ տեսնալիս սիրական,
Զարմանալի վարք ունես տեղը տեղին գովական,
Գէմքդ լցւած նման լուսնի տասն ու հինգ օրվան,
Դրախտական ծաղիկ ես՝ հոտ ունես անմահական,
Բոյըդ է սալբ [5] ու չինար [6] ծառ՝ արևուդ մատաղ:

Ունքերըդ նոր լուսին է՝ երեսդ արեգակի պէս,
Աչքերդ շամս ու ղամար փայլում ճրագի պէս,
Յաղութ [7] զումրութ [8] ջէվահիր [9] ակռիքներդ ակի պէ
Սէր իմ՝ սէրդ սրտումս վառում կրակի պէս,
Բոխախըդ [10] Հնդու [11] մարմառ՝ արև արևուդ մատաղ

Իմ դարդերս անթիւ է, ոչ հարիւր՝ ոչ հազար այ,
Բաւ է էսքան, անիրաւ, աչք ու ունքով նազ [12] արա
Հանգնըրվի ալ [13] ու ղումաշ [14] մինա [15] բոյըդ սազ [16] ար
Աղբար Աղամն ասումայ էս ի՞նչ սէվդա բաղար [17] այ
Մի բերել իմ գլուխս շառ՝ [18] արևուդ մատաղ:

# Ժ.

Իմ բալա [1] բալէն ես՝ շատ աննման ես, ճարտար ֆիմաստուն՝ գովելի բան ես, վարդի նման նովրասթա [2] նշան ես, մայխալայ բիւլբիւլ՝ թար [3] թազա [4] ջան ես, հոտով ծաղիկ ես, անմահական ես, ազնիւ սիրամարգ՝ դրախտական ես, — դրախտի մէջը սէյրը պիտի քու, շօհլաթ [5] ես տուել՝ քեզն ու քեզը դու, ահրս շա՛տ այ՝ ահրս, վախումեմ լըսի՝ ղաղար [6] անի շահրս, — ղաղարներըդ ինձ պէսպէս չի՛ անես, միտքս չի՛ խափանես:

Միտքս խափանես՝ ինձ կանի թարաջ [7], հոգիս մարմնուցս կուլինի խարաջ [8], սիրտս կ՚այրէ անշէջ սէրըդ քաջ, էլ չի՛ լինիլ քեզ մօտ խորհուրդըս համ, — խորհուրդս ընդունես ի՞նչ կուլի՝ եարաբ, քանդված սիրտս մէկ մի՛ անիլ խարաբ, — խարաբ այ ջիկեարս, ա՜խ՝ վա՜յըս ու քեարս [9], բանս ի՞նչ կուլի՝ ճարըս, օգնիմ չի՛ կարող քաշիլ իմ քաշած դարդ ու սարըս [10], բալքա դու դարտիս դարման ես, մէկ մօտըդ տանես:

Մօտըդ տանելուս՝ ձեռքէս կու քաշես, վախումեմ կըրակումդ ինձի խաշես, տուր հանգստութիւն ինձ՝ բա՛ւ է մաշես, դարդիս կցորդ իլ Սէրդար [11] ու Փաշէս, — Սարդար ու Փաշի պէս հրամայի, ֆարմանլու [12] արա՛ դռանըդ պահի, մի բան չե՛մ ուզում՝ դարդիցս սիվայի [13] — դարդըդ մասնաւոր ինձի խնդութիւն, հա՛մ ուրախութիւն՝ հա՛մ սրտիս ցնծութիւն, սրտիս միջիցը սէրըդ չի՛ հանես, ինձ նասախ [14] չի՛ անես:

Ինձ նասախ արա՛՝ կախ արա՛ դարէն [15], վերջը մեռնիլն այ էս ցաւի չարէն, մի պաչ տուր սաղանայ սըրտիս եարէն [16], բալքամ պըրծնեմ էս ինթիզարէն [17], հասրաթ [18] չի՛ մնամ քեզնից աշխարհէն, — աշխարհումըս ինձ մի՛ անիլ սիթամ, համ տա՛լ մի՛ ղուսա ղամ, ղուլլուղումդ [19] միշտ կամ, — ղուլլուղումդ միշտ ես կանգնած եմ՝ ամէն

ժամանակ, շատ վախտ ու ամանակ, սրտիս միջումը ցից ես արել՝ խանչալ[20] ու դանակ, քեզ Թըվում է հանաք[21], — էդպէս հանաքները՝ որ դու կանես, շատ մարդ կու սպանես։

Մարդ կու սպանի քաղցր խօսքերդ, հոգին կու հանի քաշ մտիկ տալդ, մեռնեմ քու ճանիկին՝ խօշ[22] ըլնի հալըդ, սիրտս քանդումէ սիրուն ման գալըդ, պէտք է հոգի տամ՝ ի՞նչ է խիալըդ[23], — միտք ու խիալըդ ես չեմ իմանում, սուրդ հանել ես՝ մարդ ես սպանում, աննըհախ[24] արիւններ շատ ես անում, ե՛կ ձեռ քաշիր ջանում, օգնիմ չի՛ հաւանում, աշխարհ ու ջիհանում[25], — աշխարհումս ուրախ գայ քու տարին, ական մի՛ դնիլ չարին, դու միշտ կամի՛ բարին՝ քու ծառայ Ազբարին, — Ազբար Ադամին էս ցաւէն հանես, չիւն[26] ահլի ջանան ես։

---

## ԺԸ.

Էժան տեսայ՝ ընդուր առայ կաղ էծը,
Ծուլծուլ էլաւ՝ տուէց մաղալլաղ[1] էծը,
Մօլլի[2] նման լաւ էր ասում հաղ էծը,
Շատ էր քէյֆով[3] խմել էր արաղ[4] էծը։

Էժան առայ՝ ասի տիրոջը խաբեցի,
Չաղուն[5] դրի՝ պոզերիցը կապեցի,
Փախսըն առաւ՝ բաղարներըն չափեցի,
Դըրժվացըրէց ինձ շինեց սարսաղ էծը։

Ինձի չունեմ անեղիցը՝ նետիցը,
Շատ եմ ծեծել՝ հարցեցէք փետիցը,
Երի՛ չարի՛, անց չի՛ կացաւ գետիցը,
Ինձնից ուզէց գէմի՛ինան[6] սալ[7] էծը։

Դուրս բերեցի սօկխտուղի[8] դըռը[9],
Վըրէս թափեց կասսաբխանի[10] շները,

Փալաս՝ մոտ մաթուշկեքանց տները,
Ախոռքըն ունէր դառնալ ղուռումաղ [11] էծը,

Երկու յետի ոտներիցը դըքեցինք,
Էն երկար ականջներիցը ձըգեցինք,
Ուշունց տուինք՝ անիծեցինք՝ թըքեցինք,
Չէր ամաչում՝ ինձ անումէր լաղ [12] էծը։

Էս չի տեսել մի էսթավուր օյունբաղ [13],
Պոզեր ունէր՝ որ ամէնն էր մի գաղ,
Համ քոսոտ էր՝ համ ղօթուր [14] էր՝ համ անմաղ,
Ոտներիցը էլել էր դաբաղ [15] էծը։

Էս չտեսայ սև իծի մըսի համը,
Գժութինումըն ըսկի չթողուց քեամը [16],
Էնդուր համար թարիֆն արէց Աղբար Աղա՛ն,
Մրոխ վրէն դըրուց դուգին [17] դաղ [18] էծը։

---

## ԺԲ։

Իմ պըլուղըն [1] ո՛վ գողացաւ տանիցը,
Խէր չի՛ տենայ իրան ջիվան ջանիցը։

Իմ պըլըխի նշանն էր խիստ դեղին,
Մի թեըն կարմիր էր՝ մի թեըն դեղին,
Բռնեքաք [2] պըլուխ տանողի ջուխտակ բեղին [3],
Թող վեր թափի երկու դիմանց չանիցը [4]։

Մի պըլըխի համար սիրտս նեղացաւ,
Չեմ գիտում՝ թէ ո՛ր շան որդին գողացաւ,
Ում հարցրինք՝ երդում կերաւ՝ ուրացաւ,
Գըլուխըս դուրս չեկաւ էս բանիցը։

Մի այլըխի համար չեմ ասիլ սուտը,
Աբրշըմէ նախշած էր ա՛ն[5] տուտը,
Կանաչ ու կարմիր էր միջի պուտը,
Որ տեսնեմ՝ կ՚ճանաչեմ նշանիցը։

Էն սըհաթը հարցրէցի հընկորըս,
Չորս կողմըս ման եկայ՝ թափ տուի շորըս,
Չեմ գիտում՝ ի՞նչ պէտք է ասեմ մօրըս,
Դուրուստ ասեմ՝ վախումեմ իմ նանիցը[6]։

Աղբար Ադամը շատ ղամ ու ղուսա արեց,
Մերս իմացաւ՝ բան չի խօսաց, սուս[7] արեց,
Էն սըհաթը ինձի տանէն դուրս՝ արեց,
Մինչի տեղակըն առայ բաղարիցը։

## Ժ.Գ.

Թարձըս քաշեց տարաւ՝ չիմացայ ո՛վ էր,
Նա՛[1] աղջիկ էր՝ եա՛ կնիկ էր՝ եա՛ կով էր։

Ավալ ավալ[2] ձեռը տարաւ եօրղանըս[3],
Տեսայ՝ խի՜տ շատ մուշքիլ[4] այ ըլնում բանըս,
Ասի՝ էդ ի՞նչ ես անում, նանըս,
Ձայն չը տուեց՝ իմացայ թէ խուռվ էր։

Նարաբ կըլնի որ ճանաչեմ էդ չարին,
Աշխարհումըս ուրախ չի գայ էդ տարին,
Ոտներս բաց էր՝ գլուխըս չոր քարին,
Չէ—ղալումի[5], հա՛—տեղըս շատ հով էր։

Էս բանիցը դեռ չեն խաբար մեր տանը,
Կէս գիշերին գլուխս եկաւ էս բանը,
Թէ պառաւ էր՝ մենուք նորա իմանը,
Թէ ջահիլ[6] էր՝ լաւ լիքը ծանր ծով էր։

Ըգըար Ադամըն ասումայ էս բանքը,
Ցեսնեմ՝ կ՚ճանաչեմ նորա նշանքը,
Վարդապետաց խարջ[7] այ՝ թէ որ տանէք վանքը,
Երկու հարիւր սարկաւագաց տակով էր։

---

## Ժ.Գ.

Ով չունի մէկ սիրական աշխարհումս, նա ի՞նչ գիտէ՝ սէրն ինչ է այս տարումս, — սէրն է անցաւոր տարիս, պարտ է միշտ գործել բարիս, եթէ կամենաս, կարես՝ սէրին մէկ բան հնարես, — անհնար է՝ սէրի բանը ջոկ կըլլի, ինչպէս մարդուս շլընքին անխղելլի թոկ կըլլի, — անխղելլի սէրը սէրին կ՚թոկի, կրակի պէս սըրտումը կ՚բորբոքի, մինչի հոգին մարմնուցը անճատելով կ՚ջոկի, պկնի անճատելյն կ՚ըսկսի չարչարումը։

Չարչարանքս բարէթ[1] է սէրի, մինչի վերջին մահը իրան կուբերի, կեանքը կ՚մաշի մարդոյս՝ հոգին կէրի, սիրականի ամէն ցաւը կ՚ների, — ներելն այ սիրոյ առաջին նշանը, որ գրումէ մեզ Սուրբ Աւետարանը, — բանը Աւետարանի՝ զէրը երեք բաժանի. մէկը՝ մարդոյս արքայութիւն կ՚տանի, մէկը՝ տուն ու տեղէն դատարգիւն[2] կանի, մէկը՝ չարաչար տանջելով, կ՚սպանի, կ՚սպանի կ՚ամփոփի վերջին չարումը։

Չար սէրը ով որ կամենայ ճանաչի, ոչ երկիւղ կունենայ՝ ոչ թէ կամաչի, խղճմտանքը միշտ մեղքի հետ կ՚տանջի, առիւծի պէս սրտի միջին կ՚կանչի, — կուկանչի բարձր ձայնիւ՝ գնտիւք իւրովք համայնիւ, — համայն գունտ բելիարայ, կ՚ժողովեն դիւբարէ[3], — դիւբարէ ժողով կանեն՝ ժուռ[4] կուգան զոհ կլանեն, հոգով մարմնով ըսպանեն՝ դէպի դժոխքը տանեն, — դժոխքի տանջանքիցը Աստուած ինքը ազատի, ազատ պահի մեզի իրան բարումը։

Բարի սէրը ինչ ժամանակ որ շարժէ, ամենայն եր-
կիւղը 'ի բաց կ'մերժէ, խաղաղութիւն բարութեան հեռ
կ'վարժէ, Աստուածային տեսութեանը կ'արժէ, — ար-
ժանի կանի մարդոյս Աստուծոյ տեսութեանը, անմահ
արքայութեան՝ եդեմ դրախտի տանը, — եդեմական դր-
րախտը մէկ դամար [5] է, լոյսըն վրէն միշտ խաչաձև կա-
մար է, բարի սէր ունեցողների համար է, բարի սէրն
նախ յառաջ՝ ճրագ է երկնաւոր Տէրին, երկրորդապէս՝
քոյ անձին, ինչպէս էլ քոյ ընկերին, — ընկերիդ ինչ
կամենաս, առաջ պէտք է իմանաս, Աստանից [6] կ'ստա-
նաս, չարին՝ չար, բարուն՝ բարի փոխարէն, անմահական
աշխարհէն կ'ստանանք անմահական աշխարհումը, մեր
վերջի դարումը։

Դադարում չի տալ երրորդ սէրը ինսանին, անկեղծ
սէր կունենայ առ սիրականին, չարախնդաց չի ըլիլ ըն-
տուր բանին, էնէնց կու սիրի ոնց որ իրան ջանին, մա-
հուն կ'տայ անձն՝ թէ որ սպանին, կ'սպանվի սիրա-
կանի խաթերը [7], տեսած ունինք աշխարհումը շատերը, —
շատերը էս կեանքումը՝ միշտ են կրում սիրոյ չարչարան-
քումը, սուրբ սիրոյ տանջանքումը, — սուրբ սէրը, տես,
կամքն է բարերարի, ինչ անձն՝ որ կատարի, հիչ [8] տար
չի գալ քարի, թէ գործով լինի բարի, — բարի սէրն
ունեցողին պէտք է երեք ա'ղիլ [9] բան, յոյս՝ հաւատ ու-
նենայ, երրորդը սիրոյ նշան, — սիրոյ նշան է ո՞րը, որ
չ'ատես քու եղբօրը, միանգամայն ճանաչես Որդին միա-
ծին՝ Հօրը, Հոգւոյն Սրբոյ շնորհը, չի քննես Աստու [10]
խորը, չի գտնըվիլ ոչ մէկը իմ սրտի բաղարումը՝ խեղծ
յԱդամ Աղբարումը։

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

## Ա.

[1] Այս։ [2] Մասիս, որ և Այրարատ կամ Արարատ, է լեառն բարձրագոյն, յորոյ վերայ կանգնեցաւ Նոյեան տապանն։ [3] Հրէայ կամ Եբրայեցի։ [4] կամ Նազարենի։ [5] Հոսեալ, վազեալ. Աէժէլ կամ Աժժէլ ել— —վազեց։ [6] Բոլորն, միանգամայն, բոլորովին, ընդ ամենն, ողջ։ [7] Ջան—Հոգի (գէօյալան) անձն, մարմին։ [8] Գլխաւորութիւն հաւատոյ կամ դենի. գլխաւոր կամ առաջնորդ բազմութեան իրիք։ [9] Ցասումն, բարկութիւն. պատիժ (չէրէնաօր). Նետ, փքին, սլաք (բօրխօ—թեան)։ [10] Պատճառ, առիթ. հանգամանք, որպիսութիւն։ [11] Տանէ 'ի տուն, դրանէ 'ի դուռն, ձորոյ 'ի ձոր։ [12] Այլ, և, եւ, դարձեալ, և եւ։ [13] Խրատ, խորհուրդք, յորդորումն։ [14] Սերտած. կիրթ 'ի բերան։ Զայս մականուն տուացաւ յայլոց Երգիչն հանդուցեալ, որովհետև առանց իրիք պատրաստութեան բանաստեղծութիւնս առնէր կամ յանկարծ խաղս ասէր յոր և իցէ բնաբանի վերայ կամ առարկայի։

## Բ.

[1] Եօքսուն կամ Եէքսուն—Անընակ, անմարդի, անշէն, ամայի. անապատ։ [2] Զի, մի։ [3] Իլլէր կամ Իլլէր—Արտաքինք, օտարք, այլք, այլազգիք. բազմութիւն, խուժան, ժողովուրդք, ազգք։ Է՛ յոքնականն Էլ բառիս։ [4] Թօլ—Գիլ. Թօլ ըլմէլ—'ի գիլ գալ, գլորիլ։ [5] Զօրխ—Ճախարակ, անիւ. մանեակ կամ օղ (փօյրէօյ, որով ճօղուն էրէէօյ)։ [6] Դէվրան—Շրջումն, շրջանք, ամ, ժամանակ։ [7] Մատէն—Հանք, մետաղք, բովք հանքոց, հրահալելիք։ [8] Մաղար,—րա,—րէ և—րէր—Այր, քարանձաւ, անձաւ, քարածերպք, խոռոչք։ [9] Հէչ—Ոչինչ, բնաւ, չէ, ամենեւին ոչ, ոչ երբէք։ [10] Սա'աթ—Ժամ, պահ, ժամանակ։ [11] Թալէհ կամ Թալէ'—Ծննդաբախտ, ախտաբք, բախտ։ [12] Դէվլէթ—Բախտ, բախտաւորութիւն, յաջողութիւն, երջանկութիւն։ [13] Գահր—Պակասութիւն, կարօտութիւն, սով, քաղց։ [14] Ի՞րր, գի՞րդ, ո՞րպէս։ [15] Ջէմ'աթ կամ Ջէմա'աթ—Ժողովուրդ, բազմութիւն, խուժան, ամբոխ. մարդիկ։ [16] Ահօվալ կամ Ահվալ—Վայ, ձայն աշխարանաց, ճիչ, հառաչանք, հեծեծանք։ (Ահ—ո՜հ, վա՜հ, եղո՜ւկ, աւա՜ղ. և Զար—ողբ, կոծ)։

Գ.

1 Թօվըր — պէս, տեսակ, գունակ: 2 Վայտ, անպիտան: 3 Խաչա-
տուր կամ Խաչիկ: 4 Եօհօտ կամ Եէհօտ, Եօհօտի կամ Եէհօ-
տի—Հրեայ. երբայեցի, յուդայեան: 5 Սիօդ, Սիօն կամ Սիօդ—կալթն:
6 Ջօվ—համբաւ, հռչակ, անուն. քարոզ: 7 Սեղան: 8 Վէճ. կռիւ.
խօսակցութիւն ընդդէմ: 9 Ապրանք, գոյք, վաճառք: 10 Քուրձ, պա-
յուսակ չափ խորգ մեծ՝ անկեալ 'ի մազից այծու: 11 Ցփսի: 12 կամ Պօ-
չէյէ — Բեռնաբարձ գործի 'ի թիկունս բեռնակրաց. և փօչ—համետի,
կորդնի և փալանի ճակատն: 13 Սորա. այսր չափ այսօրիկ: 14 Նէչէ
կամ Նէչէ—Որչափ, որքան, քանի, քանիօն: 15 Բէլքի կամ Բէլքիօէ—
Գուցէ, իցէ թէ, թերևս: 16 Բէչէ — Ջադ. ճուռ: 17 Քէչէ—Կայծ,
թաղիք: 18 Աւեր, աւերակ, քանդեալ: 19 Գործատուն, գործարան:
20 Պատմութիւն. գովք, գովաբանութիւն, գովասանք: 21 Լօյըք—Ար-
ժանի, արժանաւոր, պատշաճ: 22 Փօրօ կամ Փօրէ—Ըստակ, փող, դրամ,
կէս կօպէկ: 23 Նէմ—Գէջ, թացութիւն կամ թաց. խոնաւ. տամկութիւն:
24 Մէննէթ—Խնդիրք, աղաչանք, աղերսանք, թախանձանք. Մէննէթ ընէլ—
Շնորհս, երախտիս, բարիս, բարերարութիւն կամ բարեխաւութիւն հա-
մարել: 25 Ֆէր կամ Փէր — Փայլ, բոց, շող. ֆէրֆէր կամ ֆէրֆէր—
փայլուն, շողաւոր, բոցաճաճանչ,—փայլ: Ֆէրֆէրօլ, ֆէրֆէրօլ (և ֆըրֆը-
րօլ) — Փայլել, փայլատակել, բոցափայլել, շողալ, փողփողել:
26 Շօվք—Ճաճանչ, շող. նշոյլ. շէֆօք—լոյս երեկորին. կարմրութիւն
երկնից երևեալ ընդ երեկս 'ի մտանել արեգական. շողք: 27 Վերջա-
ւորք. ծոպք. կերպասեայ ժապաւէն՝ կարեալ 'ի ծայրս կամ յեզերս
հանդերձից: 28 Մախմարեայ կամ դիպակագործ ժապաւէն՝ կարեալ
յօձիս կամ 'ի փողպատս հանդերձից: 29 Խօյն—Թեւ, աղանի. Խէօն
—աւեղն: 30 Դիօյմէ — Կոճակ. ճարմանդ. աղխ: 31 Օղ կոճկաց կամ
ճարմանդից: 32 Թօհրիգ—Գրգիռ, հրապուրանք. գրգռելն. յորդորելն
յուզումն, շարժումն 'ի հօօանօօնիօն: 33 Փօյէնտօզ— Պատառ կեր-
պասեղէն. դիպակն մեծագին, զոր տարածանեն 'ի գետնի ընդ ոտիւք
արքայի՝ 'ի մտանել նորա 'ի քաղաք ուրեք.—զինչ և իցէ իր՝ որ ընդ
ոտիւք տարածանի, զայս կրէ անուն: 34 Գնդապետ, հազարապետ:
35 Ցանդիման լինելն. մատուցումն. առաջի առնելն.—գանգատ. գիր աղեր-
սանաց. խնդիր, խնդրագործութիւն: Արզ ընել կամ էլ — աղերսել,
աղերսամատոյց լինել, գանգատել, աղերսանօք յայտնել: 36 'Ի նմանէ

## Գ.

¹ Ոգի, կեանք. գեղեցիկ: ² Օտարական, օտար, անծանօթ:
³ Դատ, դատաստան. արդարութիւն. իրաւունք. վրէժ. տուրք: ⁴ Ու-
րախ, խրախ, խնդալից, ուրախալից: ⁵ Եօրէքք—Ոմըրի. մլ տէր. տէր
իմ. Աստուած իմ. արդեօք: ⁶ Մարդ: ⁷ Գէօլգօնկ—Վարդագոյն մե-
տաքս, վարդերանգ կերպաս. ծիրանեգոյն. զուտ կարմիր. խոտ ալ:
⁸ Օձիք. փողպատ կամ փողպատ: ⁹ Ոսկեթել, արծաթաթել: ¹⁰ Սէր-
մէր և մէրմէրէ—Ալուշ, վարանեալ, ցնորեալ: ¹¹ Էնէ և Ա՛նէ—Մէր.
ամխոյժք հոգւոյ: ¹² Ճար, դեղ. պարէն. դարման: ¹³ Չէմնօր, Չէմ-
նէր և Չէմնէր—Տաւտախ կամ տօտախ: ¹⁴ Հասակ. իրան կամ իրանք.
չափ մարդոյ երկայնութեան կամ բարձրութեան: ¹⁵ կամ Սէօրանէ—
երկայնաձև. փեզամիկ (է ամեն գինեաց երկայնավիզ, թէ էջէ ապակեղէն
և թէ այլ): ¹⁶ Քէօշ,—շօ, Քէշէ և Քէօշէ—Երանի թէ. ա՛շ թէ:
¹⁷ Սիրելի. մտերիմ. ընկերակից. բարեկամ. նազելի: ¹⁸ Համբոյր
շրթանց: ¹⁹ Խօրօքէ կամ—քէ — խանդարեալ. աւերեալ. տրտմեալ.
աւերակ. փլեալ: ²⁰ Թօօնօփ — Կալանաւոր, գերի. բանտարկեալ:
²¹ Չէմն—Արեգակն. արեւ: ²² Կօմէր—Լուսին: ²³ Ջէմ—Գումար. գու-
մարութիւն. ժողով. ջամ անէլ—գումարել, ժողովել, 'ի հաշիւ ածել:
²⁴ Նման. հաւասար. հանգոյն. Բօյ անէլ—Նմանեցուցանել, հաւասա-
րել ընդ միմեանս. հանգոյն կամ միատեսակ առնել: ²⁵ Ոչինչ, չիք.
Հպարտութիւն, ամբարտաւանութիւն: ²⁶ Բէրաբէր—Հաւասար. նման:
²⁷ Հալ — Հանգամանք կենաց. որպիսութիւն. դրութիւն վիճակի:
²⁸ Լեր: ²⁹ Նէֆէս — Շունչ. հագագ. ոգի. տուրեւառ շնչոյ. շնչումն:
³⁰ Մօօխօրըր, Վօխօրըր և Մօօխօրըէ—Անդադար, անընդհատ, յար և միշտ,
հանապազ. հաստատուն: ³¹ Բէրքօփ — Զքացեալ, աւերեալ, խանդա-
րեալ. Բէրքօփ անէլ— Ոչնչացուցանել, չքացուցանել. աւերել, խանդա-
րել. հողմոյ տալ:

## Ե.

¹ Հոգի, սիրելի. սիրական: ² Կօրբան—Կորբան, զոհ, ընծայ, մա-
տաղ: ³ Ջօքի—Գրաւումն, նուաճումն, սանձումն: Ջօքի անէլ—Նուա-
ճել, սանձել, իշխել, տիրել, գրաւել: ⁴ Մէջնօն—Խելագար. դի-
ւահար. մոլի. յիմար. կատաղի: Է՛ անուն սիրահարին Լէյլիի: ⁵ Նիշ,
սեանիշ, (որ լինի 'ի դէմս և 'ի պորտանցն ֆէսլէյնօ): Այլ որովհետև
զարդ գեղեցկութեան համարի նէշն այս առ Արևելեայս, վասն որոյ
կանայք նոցին, երբեմն և այր մարդիկ ևս, զարդարեն զպատկերս իւրեանց

արուեստաւոր կամ ճնքնաՀնար խոլխոտ: Ուսոլ և Երգինչք կողմանն—
գոմարանեն յերգս իւրեանց, զոր 'ի դէմս և 'ի պարանոցս և 'ի լանջս
և 'ի ձեռս և յոտս գեղեցկացն իւրեանց սիրականաց խոլը: 6 Առատ.
շատ. բոլոր. բոլորքումն. զուարթ: 7 Գ[illegible] և Գ[illegible]—Տրտմու-
թիւն, տխրութիւն. նեղութիւն, անձկութիւն:—8 և Գամմ—Վիշտ, Հոգ.
տառապանք. տրտմութիւն: 9 և Գոմոր—Վշտակից, վշտատես. ցա-
ւակից մոտերիմ կամ բարեկամ. մխիթարիչ: 10 Միրեւլի, Նազելի բարեկամ
կամ մոտերիմ. նուազագին, Հազուագիւտ. չքնաղ. թանգագին: 11 Ան-
գամ. կարծէք, կասկած, մտածողութիւն:—12 Փէհ—ո՜Հ. բա՜բէ. վա՜յ:
Փէհ ֆէհ—գիմ՜րդ գեղեցիկ. զի՛ բարի. զի՛ վայելուչ: 13 Թօզքո և
Թէզբէ—Մեղայ. քա՛ լիցի, օն անդր: 14 Ժողովեալ. գումարեալ. ժո-
ղով. ժողովածոյ. Բօք ըմէլ—ժողովել, գումարել. խառնել. ամփոփել:
15 Փութացող, շտապող. արագաշարժ: 16 և Թէզ—Արագ, շտա-
փութով: 17 Սոզոյ—Տուրք, շնորհք. նուէր զոՀ. ընծայ: 18 Իշ-
խանութիւն, չքեղութիւն, ճոխութիւն: 19 Սոր[illegible] կամ Սոր[illegible]—Կազմ.
զարդ. կարգադրութիւն. կարգ. կարգաւորութիւն: 20 Հոյրան—Ափշեալ,
պշուցեալ, զարմացեալ. ապուշ. զարմացումն. Հիացումն: 21 Եզջերու,
արու այծեամն: 22 Եղն, այծեամն էգ:

## Զ.

1 Դէրէ—Ցաւ, ախտ. վիշտ. կսկիծ, տրտմութիւն կամ նեղութիւն
Հոգւոյ: 2 Վոյի և Վոյեր—Ժամանակ. ժամ. պաՀ: 3 Իրաւունք, իշ-
խանութիւն. ազատութիւն. կամք. անձնիշխանութիւն: 4 Սոֆ—Կոթ. ցօ-
ղուն. կոթուն. ծղօտ: 5 Աղեղնաւոր: 6 Ադէթ—Սովորութիւն, սովորոյթ.
բնութիւն, բարք. օրէնք: 7 Տես Գ—30 ծանօթ՛՛: 8 Խոլ—Արարածք
մարդիկ. ժողովուրդ. օտարք, այլք:

## Է.

1 Դեն, կեշտ, կրօնք. Հաւատք: 2 Կրօնք, Հաւատք. դաւանութիւն
3 Գամկ—Անմարկութիւն ծոյրէ—ուշոյ. նազանօք կամ պչրանօք Հայել
կանանց. քծինս տալն գեղեցկաց: 4 Ցիմար. խելագար, խելատար
խելառ: 5 Կենդանի. առողջ. [illegible]: 6 Էօմ կամ Էօֆոր—Կեանք
[illegible]: 7 Խնձ: 8 կամ Զոոլ—Զրկանք, անիրաւութիւն, բռնութիւն
Զոոլոմ անել—Զրկել, ճնշել, անիրաւել, բռնանալ: 9 Բոհմ—Գութ
գորով, ողորմ, ողորմութիւն: Բոհմ անել—Գթալ, ողորմել: 10
Ջէվոն կամ Ջէվոն—Երիտասարդ. պատանի, պատանեակ. մատաղ

11 Էմէք—Վաստակ. երախտիք, բարիք, աշխատանք: 12 և Իշք կամ Ա՛շք—Սէր, սիրահարութիւն. աշխոյժ հոգւոյ: 13 Ջէֆա—Նեղութիւն, տանջանք, զրկանք, չարչարանք, անիրաւութիւն: 14 կամ Սիթէմ—Զրկանք, անիրաւութիւն, բռնութիւն. սայր սրոյ: 15 Շրթնահամբոյր, համբոյր շրթանց: 16 Մասն, բաժին, վիճակ: 17 Շէֆգաթ (շաֆգաթ) — Գութ, շնորհք, ողորմ, ողորմութիւն. բարերարութիւն: 18 կամ Շէհ—Թագաւոր. արքայ. իշխան. մեծ: 19 Սեվդա — Սէր, սիրահարութիւն. առ. և տուր սիրոյ: 20 Ցոյց, նշան: 21 Նորա. նմա. վասն այնր, վասն որոյ, յոյր սակս, վասն այնորիկ, որոյ վասն:

## Ը.

1 Տեղեակ, գիտակ. ծանօթ. հմուտ: 2 Գիտակ, հմուտ, հանճարեղ: 3 Էհլ—Տէր. կարող. հմուտ. գիտակ. կից, կցորդ: Էհլի — Ընտանի, սովորական: 4 Վէֆադար — Հաւատարիմ, մտերիմ, կատարիչ խոստմանց: 5 Հաստատութիւն, խոստումն. դաշն. պայման: 6 Պէտք է, պիտոյ է, պիտի: 7 Միանգամայն, լի բովանդակ, բոլորովին, գլխովին, ողջ 'ի միասին: 8 Ճշմարիտ, ուղիղ, ստոյգ: 9 Վէֆալը — Հաւատարիմ, մտերիմ. հաստատ բարեկամ: 10 Դէօղրիւ — Ուղիղ, ճշմարիտ, արդար: 11 Կատարելութիւն, լրութիւն: 12 Զբօսանք, ճեմք, երթ և եկ, ճեմումն: 13 Դիտաւորութիւն, միտք, ուշադրութիւն. ջանփոյթ, Սա՛յ էթմէք—ջանալ, աշխատել, գուն գործել, մտադիր կամ ուշադիր լինել: 14 Թըրնագ—Եղունգն (մարդոյ). կճղակ, սմբակ (չորքոտանեաց): 15 կամ Զա՛յէ — Կորուսեալ, կորստական, վատնեալ, ծախեալ. անպիտան. Զայ էթմէք—Կորուսանել, վատնել, ծախել. աւերել. 'ի չիք դարձուցանել:

## Թ.

1 Գարուն: 2 Է՛ անուն բովանդակ երկրին Իրակու և Փարիսի և Ադրպէյջանի և Խօրասանու, զոր տուեալ էր Ֆէրիդուն արքայ երեց որդւոյ իւրում Իյրէճ կոչեցելոյ. և յայնմանէ է՛ անունս Իյրան, որ է յայսկոյս գետոյն Ամույի կամ Ճէյհունի: 3 Է՛ անուն գաւառի միոջ յարեւելս յաշխարհին Պարսից, որ է յայնկոյս գետոյն Ամույի կամ Ճէյհունի, զոր ետ Ֆէրիդուն արքայ միւս որդւոյ իւրում Թուրայ. յոյր սակս և կոչեցաւ աշխարհն այն Թուրան, որ Թուրան զէմին ևս ասի:— 4 Ցայս կոյս, այսր, . . . . հետէ: 5 Սէլվ—Նոճ, նոճի, կիպարի, — բոխ կամ կիպարիս: 6 Չէնար — Սօս, սօսի (ծառ): 7 Եախութ — Ցակինթ

շափիղայ կամ շափուղայ (ոֆն պտտառայան) : 8 Ջեմերրէտ — Ջմրուխտ
(ոֆն պտտառայան): 9 Գոհարք, մարգարիտք (ոյանէ պտտառայանէ). եզա-
կին՝ Ջեւհեր — Ակն պատուական, գոհար, մարգարիտ, քար Խանգագին:
10 Միս կամ ուռոյց կախեալ ընդ կզակաւ. տեղին գնտակաձև ընդ
ծնօտաւ գեղեցկի: 11 Հինտու կամ Հինտի — Հնդիկ, հնդկային, հընդ-
կաստանի: 12 Պչրանք, նազանք. կեղծեօք հրաժարելն, կերպարանելն
գչկամութիւն. հրաժեշտ պչրանաց. Նազ անել — կեղծեօք հրաժարել,
պչրել, նազել, քնքշել: 13 Ծիրանի, զուտ կարմիր: 14 Կամալ —
Կերպաս, գլպակ. ընտիր մետաքսեղէն: 15 կամ Մինէ — Գրակնտիկոն,
գրակնտիկոն, կիտուած (յօրինուած փոյնափոյն տողիւղէն): 16 Զարդա-
րեալ, զարդ կամ զարդարանք, կազմեալ, յարմարեալ. կազմ. կոկ. յար-
մար. Սազ անել — Զարդարել, կազմել, յարմարել, կոկել, շինել յար-
մարապէս: 17 Առեւտուր, տուրևառ, տուրևառիկ փոխանակութ, վաճառա-
կանութիւն. վաճառանոց, վաճառարան, առևտրական տեղի. Սէվտա
Բազար — Տուրևառիկ սիրոյ, սիրահարութեան: 18 Շէրր — Չարութիւն,
չարիք, վնաս, տառապանք, դժբաղդութիւն, փորձանք, փորձութիւն. Շէրր
Բերել — Առնել չարութիւն, չարիս գործել կամ հասուցանել, վնասել.
տառապանաց, դժբաղդութեան, փորձանաց պատահեցուցանել, վիճա-
կեցուցանել:

## Ժ.

1 Որդեակ, ձագ, ճուտ: 2 Նէվրէս, Նէվրէսիտէ և Նէվրէսիտէ — Նո-
րահաս, նորածին, մատաղահաս. (Նէվ — նոր, նորոգ. և Րէս, Րէսիտէ
կամ Րէսիտէ — հասեալ, հասուն): 3 Թէր — Նոր, կանաչ, դալար:
4 Թազէ — Նոր, կանաչ, դալար, մատաղ: 5 Շէօ՛լէ կամ Շէօ՛լէն — Բոց.
ճաճանչ, շող, փայլ, ճառագայթ: Շէօ՛լէ կամ Շէօ՛լէն տալ — Բոցա-
փայլել, փայլել, շողալ, ճառագայթել: 6 կամ Ղալէբ և Կալէբ —
Բարկութիւն, ցասումն, սրտմտութիւն, զայրոյթք: Ղալէբ անել — Պատ-
ժել, պատուհասել, զայրանալ, բարկանալ: 7 Կողոպուտ, աւար, կա-
պուտ կողոպուտ: 8 Խարըճ կամ Խարիճ — Արտաքին, 'ի դուրս. հեռի,
օտար. բաժան կամ բաժանեալ. Խարիճ լինել — Արտաքոյ լինել, հեռա-
նալ, ելանել, բաժանիլ: 9 Գործ, զբաղումն, աշխատանք, արուեստ:
10 Պատիժ, վրէժ, վիշտք, տառապանք, չարչարանք, նեղութիւն:
11 Ջօրագլուխ, զօրապետ. պարագլուխ, գնդապետ. պետ, տէր, Իշխան:
12 Ֆէրմանլը կամ Ֆէրմանլու — Հլու, հնազանդ, հրամանակիր, պատուի-
րանապահ, հրամանակատար, կատարիչ հրամանի: 13 Բաց 'ի, բաց,
բայց միայն և եթ: 14 Անկենդան, չ՛ողջանդամ. չքացուցեալ, ոչն-

չացուցեալ, բարձեալ 'ի վեր, անհետ առեալ: 15 Դար — Կախաղան, ցից: 16 Եարա — Վէրք, խոց: 17 Ինճիգար — Կարօտանք, կարօտութիւն, ակնկալութիւն. փափաք, անձուկ (տեառնելոյ): 18 Հասրէթ — Կարօտ, կարօտի, կարօտութիւն: Հասրէթ գալ — Կարօտ մնալ, կարօտել, փափաքել, անձուկ յոյժ ունել. զրկիլ, զուրկ և թափուր մնալ: 19 Սպաս, սպասաւորութիւն, ծառայութիւն: 20 Խանճէր կամ Խանչէր — Դաշոյն, դաշնակ: 21 Ծաղր, կատակ, այպն. ծաղրալի, ծիծաղելի կամ այպանելի բան: 22 Լաւ, բարի. ախորժական. բարիոք: 23 Խայալ — Երևոյթ, միտք, կարծիք, գիտաւորութիւն, երևակայութիւն: 24 Ըննահայլ — Ցանիբաւի, 'ի զուր, 'ի տարապարտուց: Ըն (նախդիր բացբարձական) — Ըն, չ, առանց: Նա — Ըն, չ: Հայ կամ Հայլ — Իրաւ, արդարութիւն, ճշմարտութիւն. ուղիղ, արդար, ճշմարիտ: 25 Աշխարհ, երկիր, տիեզերք: 26 կամ Ձիանէ — Որովհետև, քանզի, զի, ըստ որում:

# ԺԸ.

1 Մաքալլայ — Կախեալ, 'ի կախ. գեղեղ, գրխիվայր թաւալգլոր. գլխաթաւալ կամ գլխագլոր ընդոստնուլ. գեղգեղ տալ կամ 'ի գիլ գալ մարդոյ. գլխիվայր գլորիլ: 2 կամ Մէվլա — Օրինական, օրէնսդէտ, դատաւոր (Մահմետականաց): 3 Քէյֆ — Ուրախութիւն, զուարճութիւն, խրախութիւն, զուարթութիւն ('ի գինւոյ). Քէյֆով — (Քէյֆլի) — Զուարթ, զուարճալից, ուրախ, խրախ, զուարթացեալ ('ի գինւոյ): 4 Ա'րայ կամ Ա'րաէս — Օղի, ցքի: 5 Տուն, լար, ուլանոց. կապ ոքնայ: 6 Գէմ'էլէ — Նաւով Հանդերձ. (գէմի — Նաւ. և իլէ — Հանդերձ, ընդ): 7 Լաստ, լաստափայտ: 8 Սէօյէտլէտ — Ուռենք, անտառ ուռեաց. ուռատտան: Սէօյէտ կամ Սէօյէթ — Ուռի 9 Դէտղ — Ուղիղ, հարթ հաւասար, տափարակ (տեղի, տարածանքեան), դաշտ: 10 Կառաքխանէ — Սպանդանոց, մսավաճառանոց, սպանդարան. (Կասաբ — Մսագործ, մսավաճառ, սպանդագործ. և խանէ — Տուն, տեղի): 11 Կատաղ, պոռնկախառնիչ: 12 Խաղ, կատակ, ծաղր. բանք ծաղու, խաղոյ և զուարճութեան: 13 Խեղկատակ, հասարակ միմոս, խաղասէր: 14 Բարտ, ուռուկ, քաստ: 15 կամ Տաղակ — Տապակ կամ Տապաստ. Ցաւ արջառոց փոխադրական, ուռուցիչք ուսից և կճղակաց մինչև 'ի նեխութիւն որդնալից: 16 Քէմ — Մակոյկ, պղնձաչ փոքր: 17 Դէրյէմ — Հանգոյց կամ կապ (վէրոյ). խարան, աղեղբիկ կամ աղբևրակ (վէրոյ): 18 Խարան:

## ՃԻԲ.

[1] Եաղլըք — Թաշկինակ, վարշամակ, գաստառակ: [2] Ջիւթ, կուպր, խէժ կամ խիժ՝ ըստ Ասորւոց: [3] Բըյըք — Ընչացք. պեխ կամ բեղ (ամկ): [4] Զօնէ կամ Զէնէ — Ծնօտ, կզակ: [5] Էն — Յոյժ, կարի. ամէն...... (Էնսօնը — Ամենածայրն, ամենավերջքն): [6] Նէնէ — Մայր, մայրիկ: [7] Սուս — Լուռ, մունջ. լռութիւն. Սուս ընէլ — Լռել, զլռութիւն պահել, լուռ կալ՝ մնալ:

## ՃԻԳ.

[1] կամ: [2] Էվէլ կամ Էվվէլ — Առաջին: Էվէլ Էվէլ կամ Էվվէլ Էվվէլ — Նախ, յառաջագոյն, զառաջինն, ՚ի սկզբան անդ, նախ քան զառաջինն: — [3] կամ Եօրղան — Օթոց, ծածկոյթ, վերարկու անկողնոյ. վերմակ: [4] Գժուարին, ծանր, տաղտուկ. երկբայական, յերկուական: [5] Ճանտ, բռնաւոր, անգութ յոյժ: Զալըմ մը Զալըմ էր: [6] Խակ, անգէտ (մորթ). պատանի, մանուկ, մատղաշ: [7] Հարկ, հաս, մուրարժանի, վայելուչ կամ վերաբերելի բան:

## ՃԻԴ.

[1] Բօճ — Տեսակ, ազգ, պէս, կերպ. Բօճեճ — Պէսպէս, տեսակ տեսակ, ազգ ազգ, զանազան, կերպ կերպ: [2] Դէֆէրէնճ — Վտարանդի, հալածական, թափառական, մոլորական, անհանգիստ, աստանդական: — [3] կամ Դիւ-բօր — Երկու անգամ, երկիցս, կրկին, կրկին անգամ. (Դիւ — Երկու. և Բօր կամ Բօրէ — Անգամ, նուագ: [4] Շրջագայութիւն, երթևեկութիւն: Ճօօ ֆօլ, ՚ի ճօօ ֆօլ — Շրջիլ. շրջել անդ և անդ, ման գալ, պտուտել տեղէոյ ՚ի տեղիս: [5] Երակ: Դեմոր — վըէժ: [6] յԱստուծոյ: [7] Խօնըր — Յիշատակ, յիշումն. մեծարանք, պատիւ. — առ սէր, ՚ի պատիւ, ՚ի մեծարանս, վասն, սակս: [8] Ո՛չ երբէք մի երբէք, երբէք, բնաւ, ամենևին: [9] Նուազադիւտ, չքնաղ, սուրբ ընտիր, սիրելի: [10] Աստուծոյ:

